ՍՊԸ-ն հանդիսանում է իրավաբանական անձ, ում բնորոշ է տեղեկացվածության և կազմակերպվածության առավել բարձր չափանիշներ:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող՝ ՀՀ կենտրոնական բանկի միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու և հայցը մերժելու մասին հիմնավոր է և ենթակա է բավարարման, ուստի «Արթ-Գրուպ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի՝ «CBA-2025-011» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Ռութ Այթիէսփի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է մերժման՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

**<u>6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ</u>**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Սույն գործով, նկատի ունենալով, որ հայցը մերժվում է, իսկ Հայցվորի կողմից նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 104-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. Պատասխանող ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, բավարարել:

«Արթ-Գրուպ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի՝ «CBA-2025-011» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Ռութ Այթիէսփի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*